ՀՀ ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՔԾ-ՄԱՎԾՁԲ-18/1

Ք. Երևան «16» մարտի 2018թ.

«ՀՀ հատուկ քննչական ծառայություն աշխատակազմ» ՊԿՀ-ն, ի դեմս աշխատակազմի ղեկավար Դ.Սուքիասյանի, որը գործում է «ՀՀ հատուկ քննչական ծառայություն աշխատակազմ» ՊԿՀ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից և «Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ-ն՝ ի դեմս Ակադեմիայի ռեկտոր Սերգեյ Առաքելյանի (այսուհետ՝ Կատարող) (երկուսը միասին՝ նաև կողմեր), ղեկավարվելով «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասով, կնքեցին սույն պայմանագիրը՝ հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում ՀՀ հատուկ քննչական ծառայության ծառայողների (այսուհետ՝ Քննիչներ) վերապատրաստման և հատուկ ուսուցման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ Ծառայություն) սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջներին համապատասխան:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայամանագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.2.3 ժամանակին տրամադրել Քննիչների ցուցակները.

2.2.4 ծանուցել Քննիչներին դասընթացներին ներկայանալու մասին.

2.2.5 կատարել «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքով նախատեսված այլ պարտականություններ:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, Պատվիրատուի կողմից ցանկացած ժամանակ սույն պայմանագիրը կատարելուց հրաժարվելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարել մատուցած Ծառայության համարժեք գինը, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը.

2.3.2 Մինչև Ծառայության մատուցման արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը, ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ այդ մասին առնվազն 30 օր առաջ տեղեկացնելով Պատվիրատուին.

2.3.3 Պատվիրտուից ողջամիտ ժամկետում ստանալ Քննիչների ցուցակները.

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով սույն պայմանագրով, «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքով և իրավական այլ ակտերով.

2.4.2 սույն պայմանագրով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները, իսկ նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը.

2.4.3 սույն պայմանագրի 2.2.1 կետով նախատեսված դեպքում Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում անվճար ապահովել թերությունների վերացումը.

2.4.4 ժամանակին և պատշաճ կերպով կազմակերպել և անցկացնել Քննիչների համապատասխան վերապատրաստումը և հատուկ ուսուցումը.

2.4.5 կազմել և «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքին համապատասխան՝ հաստատման ներկայացնել Քննիչների ուսուցման գործընթացը կանոնակարգող անհրաժեշտ իրավական ակտերի նախագծերը.

2.4.6 պատվիրատուի պահանջով տրամադրել Քննիչների վերապատրաստմանը և հատուկ ուսուցմանը վերաբերող անհրաժեշտ տեղեկություններ.

2.4.7 յուրաքանչյուր ուսուցման ծրագրի ավարտից հետո ներկայացնել ամփոփ տեղեկանք Քննիչների ուսումնառության արդյունքների վերաբերյալ.

2.4.8 կատարել «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքով նախատեսված այլ պարտականություններ:

2.4.9 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 276 000 (երկու հարյուր յոթանասունվեց հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է, և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն՝ նվազեցնելու այն:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է

տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարներից:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տուգանքի և (կամ) տույժի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելու պարտականությունից:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավել, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել սույն պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ամբողջությամբ կատարումը: Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N1, N1.1, N1.2, N2, N3, N3.1 հավելվածները համարվում են պայմանագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայամանգրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ հատուկ քննչական ծառայություն	«Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ
ք.Երևան Վ.Վաղարշյան 13՝՝	ք.Երևան, Փիրումյանների 9
Ֆին. նախ. գործառնական վարչություն	«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ,Մաշտոց մ/ճ
Հ/Հ 900011004059	Հ/Հ16043032235600
ՀՎՀՀ 02589128	ՀՎՀՀ 00129631
Աշխատակազմի ղեկավար	Ռեկտոր
Դ. Սուքիասյան	Ս. Առաքելյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված

«16» «03» 2018թ. կնքված
N ՀՔԾ-ՄԱՎԾՁԲ-18/1 գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1	79631200 /1	Քննիչների վերապատրաստման և հատուկ ուսուցման ծառայություններ: Վերապատրաստում և հատուկ ուսուցում կանցնեն 4 քննիչ: Վերապատրաստումները կիրականացվեն սույն պայմանագիրը ՀՀ ՖՆ-ի կողմից հաշվառվելուն հաջորդող շաբաթ օրվանից՝ ուսուցման ծրագիր Հավելված 1.1, 1.2: Ուսուցման արժեքը մեկ ունկնդրի համար կազմում է 69000 դրամ ներառյալ ԱԱՀ-ն:	դրամ	276000	1	ք.Երևան Վ.Վաղարշյան 13՝՝	15.12.2018

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ հատուկ քննչական ծառայություն
ք.Երևան Վ.Վաղարշյան 13՝՝
Ֆին. նախ. գործառնական վարչություն
Հ/Հ 900011004059
ՀՎՀՀ 02589128
Աշխատակազմի ղեկավար
Դ. Սուքիասյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ
ք.Երևան, Փիրումյանների 9
«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ,Մաշտոց մ/ճ
Հ/Հ 16043032235600
ՀՎՀՀ 00129631
Ռեկտոր
Ս. Առաքելյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 1.1

«16» «03» *2018թ. կնքված*
N ՀՔԾ-ՄԱՎԾՁԲ-18/1 գնման պայմանագրի

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ
ՀՀ ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՔՆՆԻՉՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ուսուցման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ներառում է ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչների (այսուհետ՝ ՀՔԾ քննիչների) 2018թ. կրթական չափորոշիչները, վերապատրաստման ուսուցման ձևը, ուսումնառության ժամաքանակը և ժամանակացույցը, ինչպես նաև դասավանդվող առարկայական կուրսերի համառոտ նկարագիրը:

2. Ծրագիրը մշակվել է ՀՀ հատուկ քննչական ծառայության պետի 2017թ. հոկտեմբերի 04-ի թիվ 20-Լ հրամանի հիման վրա:

3. Ծրագիրը նպատակաուղղված է ՀՔԾ քննիչների մասնագիտական գիտելիքների և հմտությունների շարունակական կատարելագործմանը քրեական իրավունքի, քրեական դատավարության, ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների, խոշտանգումների և կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտներում:

4. Ծրագիրն իրականացվում է առկա ուսուցման ձևով:

5. Վերապատրաստումն իրականացվում է մեկ խմբով՝ 30 ակադեմիական ժամ ծավալով: Ուսումնառության տևողությունը 4 շաբաթ է: Ուսումնառությունը իրականացվում է շաբաթ օրերին:

II. Դասավանդվող առարկայական կուրսերի (դասընթացների) ցանկ

N	Դասիչ	Անվանում	ժ/ք
1	SI-Q-036-18	ՀՀ քրեական իրավունքի արդի հարցեր	8
2	SI-Q-037-18	ՀՀ քրեական դատավարության արդի հարցեր	6
3	SI-Q-038-18	Քրեական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցեր	8
4	SI-Q-039-18	Կոռուպցիայի դեմ պայքարի արդի հարցեր	4
5	SI-Q-056-18	Խոշտանգման և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի չենթարկվելու իրավունքի ապահովման արդի հարցեր	4

1. SI-Q-036-18. ՀՀ քրեական իրավունքի արդի հարցեր

Դասընթացը պայմանավորված է ընտրական գործընթացների հետ կապված, ինչպես նաև պետական ծառայության դեմ ուղղված պաշտոնեական հանցագործություններով քննիչներին նոր իրավական դիրքորոշումներ մատուցելու և դրանց կիրառման հմտությունները կատարելագործելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

• ընտրական գործընթացների հետ կապված հանցագործությունների որակման և քննության մեթոդիկայի առանձնահատկությունների հետ կապված հարցերը,

• պետական ծառայության դեմ ուղղված պաշտոնեական հանցագործությունների (մասնավորապես՝ պաշտոնեական լիազորությունները չարաշահելը կամ դրանք անցնելը, խոշտանգումը, կաշառք ստանալը և այլն) որակման և քննության մեթոդիկայի առանձնահատկությունների հետ կապված հարցերը:

2. SI-Q-037-18. ՀՀ քրեական դատավարության արդի հարցեր

Դասընթացը անհրաժեշտ է քրեական դատավարության ոլորտում նոր իրավական զարգացումները, վիճահարույց հարցերի շուրջ ՀՀ Սահմանադրական դատարանի և ՀՀ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները մատուցելու, դրանք գործնականում կիրառելու կարողությունները կատարելագործելու համար, ինչպես նաև քննչական գործողությունների կատարման կարգի պահպանման կարողությունների կատարելագործման համար:

Դասընթացը ներառում է՝

• ՀՀ քրեական դատավարության մինչդատական վարույթին վերաբերող առանձին ինստիտուտների վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները և դրանց կիրառման հիմնահարցերը,

• քննչական գործողությունների կատարման ընթացքում ծագող գործնական հիմնահարցերը, առանձին քննչական գործողությունների կատարման դատավարական և քրեագիտական առանձնահատկությունները,

• ապացույցների և ապացուցման միջոցների հարաբերակցությունը,

• օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքներն ապացուցման գործընթացում օգտագործելու իրավական կարգավորման խնդիրները,

• բանկային գաղտնիք պարունակող տեղեկություններ ստանալու դատավարական կարգը,

• դատավարական հարկադրանքի միջոցները և դրանց ուսումնասիրությունը,

• ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի առանձին հոդվածների վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային պրակտիկան և դրա արդյունավետ կիրառությունը,

• ՀՀ քրեական դատավարության ոլորտում արդիականություն ունեցող այլ հարցեր:

3. SI-Q-038-18. Քրեական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցեր

Դասընթացն անհրաժեշտ է ՄԻԵԴ նոր իրավական դիրքորոշումների վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու և դրանց կիրառման հմտությունները կատարելագործելու համար:

Դասընթացը ներառում է՝

• անձի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը,

• «քրեական մեղադրանք» հասկացության ինքնավար նշանակությունը,

• մրցակցության սկզբունքի («զենքերի հավասարության») էությունը,

• անմեղության կանխավարկածի սկզբունքի էությունը,

• մեղադրյալի պաշտպանության իրավունքի ապահովման սկզբունքի էությունը,

• արդարացի դատական քննության ներքո ապացույցների թույլատրելիության և գնահատման վերաբերյալ ՄԻԵԴ չափանիշները և հիմնահարցերը:

Դասընթացը մասնավորապես ներառում է վերոհիշյալ հիմնահարցերի վերաբերյալ վերջին տարիների ՄԻԵԴ իրավական դիրքորոշումները:

4. SI-Q-039-18. Կոռուպցիայի դեմ պայքարի արդի հարցեր

Դասընթացը պայմանավորված է կոռուպցիոն առանձին տեսակի հանցագործություններով քննության մեթոդիկայի, ինչպես նաև կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում միջազգային համագործակցության վերաբերյալ գիտելիքների կատարելագործման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

• ՀՀ հակակոռուպցիոն պայքարի միջազգային իրավական կարգավորումները այդ թվում՝ Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) և Եվրախորհրդի Փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի հանձնաժողովի (ՄՈՆԻՎԱԼ) հանձնարարականները),

• կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային ինստիտուցիոնալ շրջանակների (ԳՐԵԿՈ-ի և ՄՈՆԻՎԱԼ-ի) մասնակցության և պետության կողմից ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ հարցերը,

• կոռուպցիոն առանձին տեսակի հանցագործություններով քննության մեթոդիկայի առանձնահատկությունները:

5. SI-Q-056-18. Խոշտանգման և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի չենթարկվելու իրավունքի ապահովման արդի հարցեր

Դասընթացը պայմանավորված է խոշտանգման և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի չենթարկվելու իրավունքի ապահովման օրենսդրական պահանջների, միջազգային չափանիշների վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման անհրաժեշտությամբ:

Դասընթաց ներառում է խոշտանգումների արգելքի, դրա կանխարգելման, արձանագրման և արդյունավետ բացահայտման, Ստամբուլի արձանագրության չափանիշներին համապատասխան խոշտանգումների ու վատ վերաբերմունքի հետքերի փաստագրման վերաբերյալ հարցերը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ հատուկ քննչական ծառայություն **ք.Երևան Վ.Վաղարշյան 13ա** **Ֆին. նախ. գործառնական վարչություն** **Հ/Հ 900011004059** **ՀՎՀՀ 02589128** **Աշխատակազմի ղեկավար** **Դ. Սուքիասյան**	**«Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ** **ք. Երևան, Փիրումյանների 9** **«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ,Մաշտոց մ/ճ** **Հ/Հ 16043032235600** **ՀՎՀՀ 00129631** **Ռեկտոր** **Ս. Առաքելյան**
/ստորագրություն/ Կ.Տ	/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված 1.2

«16» «03» *2018թ. կնքված*
N ՀՔԾ-ՄԱՎԾՁԲ-18/1 գնման պայմանագրի

ՀՀ ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՔՆՆԻՉՆԵՐԻ

ՀԱՏՈՒԿ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ուսուցման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ներառում է Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության (այսուհետ՝ ՀՔԾ) քննիչների հատուկ ուսուցման կրթական չափորոշիչները, ուսուցման ձևը, ուսումնառության ժամաքանակը և ժամկետները, ինչպես նաև դասավանդվող առարկայական կուրսի համառոտ նկարագիրը:

6. Ծրագիրը մշակվել է ՀՔԾ պետի 2017 թվականի հոկտեմբերի 04-ի թիվ 20-Լ հրամանի հիման վրա:

2. Ծրագիրը նպատակաուղղված է ՀՔԾ քննչների մոտ հրազենի գործադրման հմտությունների ձևավորմանը և դրանց շարունակական կատարելագործմանը:

3. Ծրագիրն իրականացվում է առկա ուսուցման ձևով:

4. Ուսումնառության ժամաքանակը նախատեսվում է 10 ակադեմիական ժամ: Ուսումնառությունն իրականացվում է մեկ օր ժամկետով:

II. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԸ (ԴԱՍԸՆԹԱՑԸ) ԵՎ ԴՐԱ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

N	Դասիչ	Անվանում	ժ/ք
1.	SI-S-001-18	Հրազենի գործադման հմտություններ	10

1. SI-S-001-18. Հրազենի գործադրման հմտություններ

Դասընթացը պայմանավորված է ՀՔԾ քննիչների մոտ հրազենի գործադրման հմտություններ ձևավորելու և դրանք կատարելագործելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է հրազեն գործադրելու, պահելու, տեղափոխելու անվտանգության կանոնները, հրազենային վնասվածքներ ստացած անձանց առաջին բժշկական օգնության հիմունքները, ինչպես նաև հրազենի կիրառման գործնական պարապմունքներ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ հատուկ քննչական ծառայություն
ք.Երևան Վ.Վաղարշյան 13՝՝
Ֆին. նախ. գործառնական վարչություն
Հ/Հ 900011004059
ՀՎՀՀ 02589128
Աշխատակազմի ղեկավար
Դ. Սուքիասյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ
ք.Երևան, Փիրումյանների 9
«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ,Մաշտոց մ/ճ
Հ/Հ 16043032235600
ՀՎՀՀ 00129631
Ռեկտոր
Ս. Առաքելյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ

«16» «03» 2018թ. կնքված
N ՀԲԾ-ՄԱՎԾՁԲ-18/1 գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության																
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**													
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	79631200/1	Քննիչների վերապատրաստման ծառայություններ			---	129000	129000	129000	258000	258000	258000	276000	276000	276000	276000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ հատուկ քննչական ծառայություն
ք.Երևան Վ.Վաղարշյան 13՝՝
Ֆին. նախ. գործառնական վարչություն
Հ/Հ 900011004059
ՀՎՀՀ 02589128
Աշխատակազմի ղեկավար
Դ. Սուքիասյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ
ք.Երևան, Փիրումյանների 9
«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ,Մաշտոց մ/ճ
Հ/Հ 16043032235600
ՀՎՀՀ 00129631
Ռեկտոր
Ս. Առաքելյան

/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված 3

« 16» «03 »2018թ. կնքված
N ՀՔԾ-ՄԱՎԾՁԲ-18/1 գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1

«16» «03» *2018թ. կնքված*
N ՀՔԾ-ՄԱՎԾՁԲ-18/1 գնման պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն